ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 40

11/11/2019

05-013-0221-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Կարեն Վալերիկի Ավագյանի 25.07.2019թ. դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաշվի առնելով , որ 05-013-0221-0023 կադաստրային ծածկագրով հողամասը չի մշակվում , իր նպատակին չի օգտագործվում և հաշվի առնելով Աստղաձոր համայնքի շահերը հավանություն տալ Աստղաձոր համայնքի բնակիչ Կարեն Վալերիկի Ավագյանին (ծնվ. 14.10.1978թ.) սեփականության իրավունքով պատկանող 05-013-0221-0023 կադաստրային ծածկագրով 0.3006 հա մակերեսով վարելահողի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսականից փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակությանը , իսկ գործառնական նշանակությունը՝ վարելահող հողերի կազմից փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության: Նշված հողամասում հետագայում օրենքով սահմանված նորմերով մեկ հարկանի առևտրի շենք կառուցելու համար:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին գործընթացը կազմակերպելու համար համապատասխան հողաշինարարական գործերը ներկայացնելու Գեղարքունիքի մարզպետին՝ ՀՀ Կառավարության ,,Հողերի օգտագործման

ժամանակավոր սխեմաների համաձայնեցման,, միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՄԿՈՅԱՆ ՎԻԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**